



ՊԱՏԱՆԻ ՄԱԹԵՄԱՏԻԿՈՍ - 2016

ԵԶՐԱՓՈՒԿՉ ՓՈՒԼ, 5-րդ դասարան, տևողությունը՝ 120 րոպե

Խնդիր 1: Ջրավազանում ջուր կարող է լցվել 2 խողովակներից: Առաջին խողովակով մեկ ժամում լցվում է 120լ ջուր, իսկ երկրորդով՝ 140լ: Քանի լիտր ջուր կլցվի ջրավազանում 5 ժամվա ընթացքում, եթե խողովակները միաժամանակ բացվեն:



Խնդիր 2: Վեց տարբեր քարտերի վրա գրված են 315, 41, 6, 7, 63, 2 թվերը: Այդ քարտերը դասավորելով իրար կողքի կստացվի 10-անիշ թիվ: Այդ եղանակով ստացե՛ք՝ ա/ հնարավոր ամենափոքր 10-անիշ թիվը, բ/ հնարավոր ամենամեծ 10-անիշ թիվը:

Խնդիր 3: Մի ավազանում կար 4 անգամ ավելի շատ ջուր, քան երկրորդում: Երբ առաջին ավազանում ավելացրեցին 34լ ջուր, իսկ երկրորդ ավազանում՝ 21լ, ապա երկու ավազաններում միասին եղավ 440լ ջուր: Պարզել, թե սկզբում որքա՞ն ջուր կար ավազաններից յուրաքանչյուրում:



Խնդիր 4: 24մ երկարությամբ գնացքը 48 մետր երկարությամբ կամրջի վրայով անցնում է 18 վայրկյանում: Որքա՞ն ժամանակում գնացքը կանցնի բարակ սյան կողքով:

Խնդիր 5: Հողամասն իրենից ներկայացնում է նկարում պատկերված 7 միավոր երկարության և 2 միավոր լայնության ուղղանկյուն: Վանդակներից որևէ մեկում արևածաղիկի սերմեր ցանելիս այդ վանդակում և նրան հարևան բոլոր վանդակներում (հարևան են ընդհանուր կողմ ունեցող վանդակները) աճում են ցանած սերմերի թվով արևածաղիկներ: Ցանեցին արևածաղիկի 37 սերմ: Քանի՞ արևածաղիկ աճեց Բ վանդակում, եթե հայտնի է, որ Ա վանդակում աճեց 9 արևածաղիկ, Գ վանդակում՝ 14, իսկ Դ վանդակում՝ 10: Պատասխանը հիմնավորել:



		Բ				Դ
Ա				Գ		